Էլիկո

12+

ԷԼՅԱ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Էլյա Համբարձումյան

Էլիկո

«ЛитРес: Самиздат»

2019

Համբարձումյան Է. Ֆ.

Էլիկո / Է. Ֆ. Համբարձումյան — «ЛитРес: Самиздат», 2019

Պատմվածքների այս ժողովածուն ծաղկաքաղ է հեղինակի կյանքից՝ համեմված բազմաթիվ ծիծաղաշարժ դրվագներով, որոնք հնարավոր չէ ընթերցել առանց ժպիտի: Գիրքը կարող է հետաքրքրել տարբեր տարիքի և տարբեր հետաքրքրությունների տեր ընթերցողներին:

© Համբարձումյան Է. Ֆ., 2019
© ЛитРес: Самиздат, 2019

Նախաբան

Գիրքս հետաքրքիր ծաղկաքաղ է իմ կյանքից: Այն սկսվում է մանկությանս հուշերից, որտեղ կոշիկ չունենալը առավելություն էր՝ հմտորեն ծառ բարձրանալու համար, որտեղ հնդկական կինոդիտմանը մասնակցելու համար փոքրիկ անկարգը գնում էր խորամանկությունների, շատ հաճախ հայտնվում էր ծիծաղաշարժ պատմությունների կիզակետում, որտեղ նրա մանկության քաղաքը՝ Հոկտեմբերյանը, ամենագեղցիկն էր, ու որտեղի պաղպաղակի ու կորժիկի համը քիմքս պահում է մինչ օրս:

Առանց ժպիտի, իսկ երբեմն էլ առանց ծիծաղի հնարավոր չէ ընթերցել: Այս պատմությունները ժպիտ են պարգևելու, բայց երբեմն կխոնավացնեն ձեր աչքերը. ուղղակի կկարդաք տողատակը, որն այնպես հմտորեն փորձել եմ թաքցնել:

Ակամայից մասնակիցը կլինեք բոլոր պատմությունների, ձեր աչքի առաջ կմեծանա Էլիկոն, ու հաստատ կզգաք, որ այսուհետ նրանից մի մասնիկ կրելու եք ձեր մեջ:

Գիրքը փոքր չափի է ու հեշտությամբ կտեղավորվի ձեր պայուսակում, որպեսզի նույնիսկ մի քանի ազատ րոպե ունենալու դեպքում կարողանաք լցնել ձեր ժամանակը: Լավատեսության մի կաթիլը մի ամբողջ տխուր ծովի մերան կարող է դառնալ: Այդ կաթիլն այս գրքում է: Թող ձեր կյանքում միայն բարի՛ն լինի:

Ձեր՝ Էլյա Համբարձումյան

կամ ուղղակի՝ Էլիկո

Հաջի կարապետը, արփոն ու ես

Ուզում եմ պատմվածքի ձևով ներկայացնել դրվագներ իմ՝ կարծես թե մոտիկ, բայց իրականում այնքա՜ն հեռավոր մանկությունից: Երևի թե բոլորի մոտ է գալիս մի տարիք, երբ սկսում են հաճախակի անդրադառնալ մանկությանը՝ լուսավոր ու խենթություններով լի ժամանակահատվածին: Նոր դրվագներ եմ հիշում, որոնց առաջներում ուշադրության չեմ էլ արժանացրել ու ցավելու աստիճան կարոտ եմ զգում հեռավոր այդ օրերի հանդեպ: Բաբոյիս պատրաստած ձվջուրն եմ հիշում, փամփլիկ ձեռքերով պատրաստած ալադիները, որոնք խժռում էի անհագորեն…

Վերջերս աղջիկս ինձ հարցրեց. «Մա՛մ, այդքան քաղցրասեր լինելով՝ ինչո՞ւ ալադի չես ուտում»: Աղջիկս ընտիր է պատրաստում: Ասացի. «Ես բաբոյիս պատրաստածի համը չեմ ուզում կորցնել, Նա՛ն ջան: Քիմքս ա՛յն համն է հիշում»:

…Անհամբեր սպասում էի ամռան գալստյանը, որ գնայի տատիկիս ու մորաքրոջս տուն: Նրանք Հոկտեմբերյանում էին ապրում (ինձ համար խորթ է Արմավիրը. իմ քաղաքը Հոկտեմբերյանն է): Նույնիսկ մեկ–երկու տարի այնտեղ եմ դպրոց գնացել: Տատիկիս տունը հենց քաղաքի կենտրոնում էր՝ այգու մեջ: Այդ մի շենքն էր այդտեղ, ու այն հարցին, թե որտեղ է մեր տունը, ես հպարտությամբ պատասխանում էի. «Սադի մեջ»: Իմ գնալով շենքն աշխուժանում էր: Երեխաներն ուրախանում էին, որովհետև արկածախնդիր էի, ու նրանց սպասվում էր թեժ ամառ: Աշխուժանում էին նաև մեծերն ու իրար մեջ դժգոհ փսփսում, որ սկսվելու է իրենց անհանգիստ կյանքը: Տատիկս, ում քնքշորեն «բաբո» էի ասում, գրկախառնվելուց հետո սկսում էր դաստիարակչական իր խրատները, որոնց բովանդակությունը տարիների հետ չէր փոխվում. «Էլիկո՛ ջան, հեռու չգնա՛ս, չլնեմ–չիմանամ՝ Միշիկի հեծանիվին կպել ես. ես դրա մոր զահլեն չունեմ: Թթի ծառերից հեռո՛ւ, չբարձրանա՛ս, ամո՜թ է, արդեն մեծ աղջիկ ես: Մազերդ առանց սանրելու դո՛ւրս չգաս, բալե՛ս»: Բաբոս պարբերաբար, բայց թերահավատորեն ինձ հիշեցնում էր իմ աղջիկ լինելու փաստը՝ հույս ունենալով, որ մեկ տարվա ընթացքում հնարավոր է՝ հասկացած լինեմ այդքանը: Ինքը խոսում էր, ես լուռ գլխով էի անում ու սպասում, թե երբ է հնչելու բաղձալի «դե գնա՛, բալե՛ս»–ը:

Առաջինը, որ անում էի, ստուգելն էր, թե արդյոք Միշիկը հեծանիվը նույն տեղում է պահում: Պետք է հասցնեի մինչև իմ գալստյան մասին նրանց տեղեկանալը հեծանիվը մի լավ վայելեի… Հոկտեմբերյանում չկար մի անկյուն, որ ես եղած չլինեի: Քաղաքի խորհրդանիշ դարձած Հաջի Կարապետի հետևից ժամերով գնում էի… Նա փայտից խաղալիքներ էր պատրաստում ու երգեցիկ ձայնով կանչում էր. «Հաջի Կարապետը հո՜ս է… մի մանեթը քո՜վս

է»: Եթե հոգնում էր, ես էի նրա փոխարեն ձայնս գլուխս գցած կրկնում. «Հաջի Կարապետը հո՞ս է…»: Հին հոկտեմբերյանցիները կհիշեն Արփոյին. հոգեկան խանգարում ունեցող կին էր: Գունեղ շորեր էր հագնում միշտ ու, ինքն իրեն խոսելով, ման էր գալիս քաղաքում: Եթե մեր ուղիները խաչվում էին, մեղք լիներ Արփոն. հետևից այնքա՜ն էի քայլում՝ կրկնելով ասածները, մինչև որ մի լա՜վ քոթակ էր հասցնում ինձ: Քաղաքի փողոցներով երբեմն սայլեր էին գնում՝ լծված էշերին: Մենք դրան էշի կաշկա էինք ասում, մեկն իմանա, թե դա ինչ էր նշանակում՝ այդ կաշկան: Զգույշ, որ սայլապանը չնկատեր, հետևից կառչում էի սայլին ու երջանիկ տեղափոխվում մինչև այնտեղ, որտեղ կհասցներ ինձ նկատել սայլապանն ու մտրակով դեպի հետ փորձեր հարվածել: Շատ ժամանակ կողքից էին զգուշացնում, գոռում էին. «Ամոթ չի՞ բա, դու աղջիկ ես»: Ու մինչ մտրակը հետ կհասներ, ես բարեհաջող վայրէջք էի կատարում: Ուսումնասիրելով անցածս ճամփան, նոր արկածներ որոնելով՝ գալիս էի տուն:

Կորչելուս համար երեկոյան պատրաստ էի մի լավ թուքումուր ուտելու, բայց տպավորություններս այնքա՜ն վառ էին, իսկ ես՝ այնքա՜ն հոգնած, որ հազիվ էի հասցնում ոտքերս լվանալ ու ընկնել մահճակալին… Բաբոս ասում էր. «Բոլոր մաղերը ծախեցի՞ր, բոշա՛ ջան, հո կիսատ գործ չե՞ս թողել»: Մորաքույրս՝ իմ լավ Անոն, կողքից ավելացնում էր. «Ոչի՜նչ, մնացածն էլ վաղը կանի»: Վերջին բառերն արդեն չէի լսում, բայց ենթադրում էի, թե ինչի մասին կլինեին, որովհետև ամեն օր կրկնվում էր նույնը: Ես խոր ու վաստակած քուն էի մտնում՝ վաղվա հետաքրքիր օրվա ակնկալիքով..

«Բարե՛վ, Բաբո՛»

Տատիկս Հոկտեմբերյանի միակ հիվանդանոցի շեֆ–խոհարարն էր, մորաքույրս էլ նույն հիվանդանոցում մանկաբարձուհի էր աշխատում: Ի դեպ՝ երկուսն էլ շատ հարգված մարդիկ էին: Եղեռնի ժամանակ տատիկիս ծնողները սպանվել էին, նրան ու քրոջը մի մարդ էր փրկել և հետագայում հանձնել Գյումրիում տեղակայված ամերիկյան մանկատուն: Շիրազի հետ մի խմբում էին եղել: Տատիկս գրագետ, կարդացած կին էր, անգլերենին տիրապետում էր շատ վարժ: Փորձում էր ինձ հաղորդակցել այդ լեզվին, բայց ճիշտ ժամանակ չէր ընտրված. ինձ դուրսն էր կանչում:

Ես շատ ժամանակ էի անցկացնում հիվանդանոցի բակում, երբ մերոնք աշխատանքի էին լինում: Այսպես ասած՝ գնդի որդի էի, ավելի շուտ՝ գնդի դուստր. բժշկական անձնակազմն ինձ լավ գիտեր ու ինձ «Բաբո» էին կանչում երբեմն: Բաբոյիս թվում էր, թե ես այդպես ավելի ապահով կլինեմ, հեռու չեմ գնա, այնինչ ես անցնում էի ա՛յլ շառավղով փնտրտուքների: Ինձ շատ էր դուր գալիս հիվանդանոցի բազրիքների վրայով սահելը: Բարձրանում էի երրորդ հարկ ու հարկեհարկ սահելով իջնում: Հիվանդանոցի գլխավոր բժշկի ազգանունը Մկրտչյան էր: Նրան տեսնելիս բոլորը ձգվում էին: Բոլո՛րը, բայց՝ ոչ ես: Չէի հասկանում, թե ինչու են լարվում, երբ այդ մարդուն տեսնում են…

Մի անգամ՝ բազրիքով սահելիս, Մկրտչյանը դուրս եկավ դիմացս, ես էլ ուղի՜ղ ընկա նրա գիրկը: Բոլորովին վատ չզգալով՝ ուղղվեցի և ասացի.

– Բարև՛ Ձեզ, Մկրտչյա՛ն ձյաձյա:

Վերջինս լայն ժպտաց, մազերս խառնեց ու ասաց.

– Բարև՛, Բաբո՛:

Երբ միջադեպի մասին պատմեցի բաբոյիս, ինձ թվաց, թե կասի. «Ապրե՛ս, Էլիկո՛ ջան, որ բարևել ես»: Բայց շատ խիստ զայրացավ ու փորձեց մի երկու խոսք ասել իմ մեծ աղջիկ լինելու ու խելոքության միջև եղած հեռավոր կապի մասին, բայց դե ես արդեն դուրս էի թռել խոհանոցից… Հա, մի բան էլ ասեմ. հենց քաղցածանում էի, վազում էի բաբոյիս մոտ: Ուրեմն, մեծ պղնձի միջից կաթի սերը քաշում էր, լցնում էր ափսեի մեջ, ու ես արագ–արագ ոտքի վրա ուտում էի ու նորից վազում դուրս: Ամբողջ կյանքում չմոռացա այդ համն ու հիմա էլ պատեհ առիթ եմ փնտրում, որ նորից վայելեմ: Պատահական չէ, որ միշտ նիհարելու խնդիր ունեմ. դե, կաթի սերով մեծացած աղջիկ եմ: Հենց քաղցր էի ուզում, գնում էի ծծնդատուն՝ մորաքրոջս մոտ: Մի անգամ էլ հասա մինչև ծնարան, մորաքույրս ինձ տեսավ, ձեռքիցս բռնեց ու դուրս շպրտեց, հետն էլ ասաց, որ էլ ոտքս չտեսնի էդ կողմերում:

Ուրեմն, ինչպես ասացի, մեր տունը քաղաքի կենտրոնում էր՝ Լենինի պողոտայում: Եթե այդ կողմերում մարդ էր մահանում, անպայման փողոցի սկզբից մինչև վերջ դագաղը տանում էին ձեռքերի վրա. կարգն էր այդիսին: Ես չափազանց հետաքրքրվում էի այդ արարողությամբ: Հենց լսում էի երաժշտության ձայնը, ուր էլ լինեի, դուրս էի թռչում ու միանում թափորին, ավելի շուտ՝ առաջնորդում այն: Այսպես, ուրեմն, սկզբից գնում էին երաժիշտները, հետևից տանում էին դագաղը, դագաղի հետևից գնում էի ե՛ս: Ինձնից հետո նոր՝ հարազատները: Գնում էի շա՜տ լուրջ դեմքով ու պարբերաբար հետ էի նայում. հետևում էի, թե ով ինչպես է լաց լինում: Որոշ ժամանակ հետո հետևիցս եկողների լացը մի պահ կտրվում էր, բոլորն ուշադիր ինձ էին նայում՝ դեմքերին կարեկցանք. երևի ուզում էին հասկանալ, թե ես ինչ բարեկամ եմ հանգուցյալին, միմյանց շշուկով հարցեր էին տալիս: Ու քանի որ ես Հոկտեմբերյանում միշտ ոտաբոբիկ եմ եղել, քայլում էի այնքան, քանի դեռ ճրո շոգը չէր այրում ներբաններս կամ էլ ուղղակի կորցնում էի հետաքրքրությունս ու վազելով դուրս էի գալիս թափորի միջից: Հինգ րոպեից արդեն մի նոր բան էի մոգոնած լինում:

Բարձրագույն պիլոտաժ

Ինչպես ասացի, մեր տունը այգու մեջ էր: Քաղաքում միակ զբոսայգին էր, որտեղ նաև կային բազմապիսի կարուսելներ: Երևի թե հարկ չկա պատմելու, թե ինչպես ուսումնասիրած կլինեի տեղանքը… Բոլոր կարուսելները օրը մի քանի անգամ նստում էի, բայց դե ավելիի ցանկություն կար, իսկ փողը սահմանափակ էր: Դրա ճարն էլ էի գտել: Մի տեսակի ինքնաթիռ–կարուսել կար՝ ամենապահանջվածը, որը պտտվելու ընթացքում պետք է բարձրանար վերև: Երեք հոգի էին նստում մեջը. մեկը՝ առջևում, երկուսը՝ ետևում: Վերև բարձրանալու համար անհրաժեշտ էր, որ առջևում նստածը ոտքով ուժեղ հրեր սեղմակը, այլապես ինքնաթիռը ներքևում ուղղակի կպտտվեր: Դե իմ ինքնաթիռն ամենաբարձրն էր թռչում, որովհետև ես գիտեի այդ նրբության մասին, իսկ նրանք, ովքեր գալիս էին գյուղերից կամ էլ քիչ էին հաճախում, բնականաբար տեղյակ չէին: Ասեմ, որ ոտաբոբիկ էի. երբ շաբաթը մեկ կոշիկներս տակից ծակվում էին, որոշեցին ինձ միայն դպրոցից առաջ կոշիկ գնել, ու դա իմ սրտով էր, որովհետև գլուխս կազատեի անվերջ խրատներից՝ փողոցները չափչփելու մասին: Կարուսելի կանգնելուց հետո բոլորի հիացական հայացքների ներքո ես, հնդկահավի նման փքված, հաղթական դեմքով իջնում էի ու գնում դեպի ելքը: Հետևիցս երեխաները գալիս էին ու խնդրում, որ բացատրեմ, թե որն է գաղտնիքը, որ ես այդքան բարձր եմ թռչում: Ես դեմքի լրջագույն արտահայտությամբ բացատրում էի, որ իրենք դա չեն կարող անել, ու որ դա ի՛մ մենաշնորհն է: Էս երեխեքն էլ, իրար հերթ չտալով, խնդրում էին, որ վճարեն իմ փոխարեն, միայն թե ես նստեմ իրենց ինքնաթիռի առջևում ու վերև բարձրացնեմ: Ձևականորեն դժգոհ դեմք ընդունած՝ համաձայնվում էի: Մինչ ես դրսևորում էի բարձրագույն պիլոտաժ, ներքևում ինձ համար հաջորդ անգամվա տոմս էին գնում: Արդեն երևի պատկերացրիք, թե ես երեկոյան ինչ կարգի հոգնած ու գլխապտույտով կգնամ տուն: Լավ էր, որ կարուսելն աշխատում էր միայն շաբաթ և կիրակի օրերին:

Տանն ինձ սպասվում էր բաբոյիս հերթական ու հուսահատ բացատրական աշխատանքներն առ այն, թե ինչպիսին պետք է լինի աղջիկն, ու ես որքան եմ հեռու այդ չափանիշից: Ես լսում էի ուշադիր, պինդ փաթաթվում էի բաբոյիս, պաչպչում ու հետն էլ մտմտում հաջորդ օրվա անելիքներս:

Մորաքույրս մի ընկերուհի ուներ՝ Սիրան անունով: Սկզբում շատ մտերիմ էին, հետո ինձ անհասկանալի պատճառով սկսեցին հաճախակի վիճել: Վիճում էին, բայց դե Սիրանն ամբողջ օրը մեր տանն էր լինում: Մի օր մորաքույրս՝ Անոն, որին տարիքային քիչ տարբերության պատճառով միշտ անունով եմ դիմել, ինձ կանչեց ու ասաց.

– Էլիկո՛ ջան, լսի՛ր՝ ինչ եմ ասում. ուրեմն, որ Սիրանը գա, որոշ ժամանակ հետո դու իրեն կասես. «Էլ չգա՛ս մեր տուն»: Ես կգայրանամ վրադ, բայց դու էլի՛ կասես: Էնքա՜ն կասես, մինչև թողնի ու գնա:

Ես սիրով համաձայնվեցի, մի տեսակ նույնիսկ պատկերացրի Սիրանի դեմքի արտահայտությունը, սկսեցի րոպեն մեկ պատշգամբից նայել, թե երբ է գալու, որ ես

փայլեմ ինձ վստահված առաջադրանքը կատարելում: Մի քիչ հետո եկավ Սիրանս. նայում եմ ու պատկերացնում, թե խեղճի գլխին ինչ եմ բերելու: Մի քիչ նստեցին, ինչպես որ պայմանավորվել էինք, ես՝ ոչ այս, ոչ այն, էս խեղճին ասացի, որ հենց հիմա վեր կենա ու գնա մեր տնից: Սիրանը զարմացած ինձ նայեց, մտածեց՝ կատակ եմ անում, ճիշտ է՝ չար, բայց՝ կատակ: Ես անկոտրում էի.

– Հենց հիմա գնա՛ մեր տնից:

Սիրանը շրջվեց դեպի Անոն, որ տեսնի՝ ինչ արձագանք կա ինքնագործունեությանս պահով: Անոն շփոթվեց, երևի չէր սպասում, որ ես այդ կարգի վիրտուոզ կկատարեմ դերս: Սկսեց ինձ սաստել, բայց ըստ պայմանավորվածության՝ ես պետք է պնդեի իմ պահանջը: Անոն, երևի ինքն իր արածից արդեն փոշմանած, ուզում է հարթել տհաճ միջադեպը, բայց դե ես չեմ հասկանում այդքան բանն ու անընդհատ կրկնում եմ, որ Սիրանը լքի մեր բնակարանը: Սիրանը վեր կացավ տեղից: Տեղից վեր կացավ նաև Անոն, հասավ ինձ ու՝ տուր, թե կտաս… Ճիշտ է, ցավոտ չէր խփում, բայց միայն այն, որ իմ անթերի կատարած աշխատանքը այդ կարգի չի գնահատվել, ու ինքը խախտել է պայմանավորվածությունը, հետն էլ՝ ես իզուր քոթակ եմ ուտում, ինձ հանեց հունից: Սիրանն էլ զգաց, որ ինչ–որ շա՛տ փափուկ ծեծ էր: Ես մի քիչ հեռու գնացի, որ ամեն դեպքում Անոյին անհասանելի լինեմ, գոռացի.

– Ինչի՞ ես խփում, դու չասեցի՞ր, որ զզվում ես Սիրանից, ու որ ես իրեն ասեմ էլ չգա մեր տուն:

Մինչ Անոն կփորձեր ինձ բռնել, իսկ որ բռներ՝ հաստատ մեծ կտորս ականջս էր թողնելու, ես Սիրանին հրեցի ու դուրս թռա տնից: Մինչև բաբոս աշխատանքից չեկավ, ես տուն չգնացի: Հետո, իհարկե, հաշտվեցինք Անոյի հետ. խոսք վերցրի, որ եթե բաբոն տանը չլինի, ինքն ինձ չի պատժելու:

Պատմում եմ ուրախ դեպքեր, բայց աչքերս խոնավանում են… Չեմ արտասվելու, որովհետև դեռ Էլի զավեշտալի բաներ կան պատմելու իմ, Մարո Մարգարյանի խոսքերով ասած, ծիածանափեշ մանկությունից, առանց որոնց ներկապնակիս գույներն ամբողջական չեն լինի…

Կինոդիտում

Մի անգամ տատիկս ու մորաքույրս որոշեցին կինո գնալ: Հնդկական ֆիլմ էր, ու հազիվ էին տոմս ձեռք բերել: Բնականաբար, ես պլաններում չկայի ու շատ ծանր տարա: Մի լավ լաց եղա՝ գետնին պառկելով, ոտքերս հատակին հարվածելով: Հույս ունեի, որ ազդեցություն կգործեմ, ու ինձ էլ կտանեն, բայց… զրո արձագանք: Երբ արդեն տնից դուրս էին գալիս, մորաքույրս ինձ մեկնեց մի բարակ գիրք ու ասաց, որ եթե մինչև իրենց վերադարձը կարդացած լինեմ, խոստանում է մյուս անգամ իրենց հետ ինձ էլ տանել: Հեռանկարային կինոդիտումն ինձ բոլորովին չուրախացրեց: Իհարկե, իրենց դուրս գալուց հետո գիրքը շպրտեցի դեպի դուռը, բայց դադարեցի լացել, որովհետև հանդիսատես չունեի: Մի քանի րոպե անիմաստ պատեպատ զարկվելուց հետո աչքովս ընկավ դռան տակ ընկած գիրքը: Վերցրի, կարդացի վերնագիրը՝ «Ո՞ւր է թռչում փոքրիկ կռունկը». ֆո՛ւ, ինչ էլ վերնագիր է, չե՛մ կարդալու… Դուռն էլ կողպել են վրաս, թե գնամ դուրս… Հետաքրքիր է, բայց ո՞ւր կարող է թռչել ինչ–որ մի փոքրիկ կռունկ: Վերցրի գիրքն ու սկսեցի թերթել… Հիսուն տարիների հեռվից չեմ կարող հիշել բովանդակությունը, բայց որ կլանված կարդացի մինչև վերջ, պարզ եմ հիշում: Մերոնք վերադարձան ու շատ զարմացան ինձ հանգիստ նստած տեսնելով: Ես սկսեցի ոգևորությամբ պատմել կռունկի մասին, որով և արժանացա հիսուն կոպեկի: Ինձ ասացին, որ այդ գումարով կորժիկ ու պաղպաղակ գնեմ, չեմ կարող գնալ ֆիլմը դիտելու, քանի որ դժվար է տոմս ձեռք բերելը: Այդ փաստն ամենևին ինձ չհուզեց, որովհետև, իմ պատկերացմամբ, դահլիճ ընկնելու համար բոլորովին պարտադիր չէր դռնով ներս մտնելը: Գնացի «Արարատ» կինոդահլիճի մոտ: Էն, որ ասում են՝ ասեղ գցելու տեղ չկար, այդ պահի համար էր ասված, բայց դե ես հեշտ հանձնվողներից չէի (ասեմ, որ մինչև հիմա էլ էդպիսին եմ): Հոկտեմբերյանի շոգին նույնիսկ կինոյի հսկիչները չէին դիմանում ու ֆիլմը սկսելուց հետո բացում էին դռները, քաշում հաստ վարագույրներն ու գեստապոյի պես կանգնում էին

դռների մոտ: Որոշ ժամանակ անց, երբ ինչ–որ չափով բթանում էր հսկիչների զգոնությունը, ես զգուշորեն ներս էի սողոսկում դռնից ներս: Հնարավորինս մոտենում էի էկրանին ու նստում հատակին: Կլանված նայում էի մինչև վերջ: Դա շարունակական բնույթ ունեցավ, քանի որ ֆիլմն ինձ շատ էր դուր եկել: Վերնագիրն էր՝ «Փոշու մեջ ընկած ծաղիկը»: Ֆիլմից հետո դեմքիս ակոսներ էին գոյանում արցունքի ու փոշու առկայաթյունից: Մի քանի անգամ ֆիլմը դիտելուց հետո այլևս էկրանն ինձ քիչ էր հետաքրքրում: Հասկացա, որ ես հիմա ունեմ մի կարևոր առաքելություն. այն է՝ հանրությանը տեղեկացնել ֆիլմի բովանդակությանը նախօրոք, որպեսզի մինչև հանգուցալուծմանը հասնելը իրենց առողջությունը լուրջ վտանգ չկրի: Ֆիլմում օձը մոտենում էր քնած երեխային, ու կանայք դահլիճում սկսում էին լացուկոծ դնել, ոմանք նույնիսկ սրտերն էին բռնում: Ու այդտեղ հայտնվում էի ես՝ իմ կարծիքով կախարդ փերու տեսքով.

– Տոտա՛ ջան, մի՛ մտածիր, երեխուն բան չի լինում, փրկելու են, չմտածեք,– ու անցնում էի մանրամասներին, թե ով և ինչ ձևով է մասնակցում «փրկարարական» աշխատանքներին, ու ինչպիսի տղա է դառնալու այդ երեխան: Ես պատրաստ էի ավելին ասելու, բայց արի ու տես, որ իմ այդ բարեգործական ջանքերը ճիշտ չընդունվեցին հանդիսատեսի, հատկապես հսկիչների կողմից, ու, մեղմ ասած, ինձ դահլիճից դուրս հրավիրեցին՝ խստագույնս ասելով, որ ինձ այդ կողմերում տեսնել չեն ուզում: Դե, առանձնապես դարդ չարեցի, մտածեցի, որ ես ի՞նչ, իրե՛նք բան ունեն կորցնելու, դե հիմա թող մինչև ֆիլմի վերջը սպասեն, մի լա՜վ լաց լինեն, մինչև կիմանան իսկությունը: Ես իմ առաքելությունը համարեցի ավարտված ու հանգի՜ստ խղճով լքեցի դահլիճը:

Կոշիկի տուփը

Օգոստոսի վերջին՝ դպրոցի սկսվելուն ընդառաջ, մեր փողոցի երկայնքով կազմակերպվում էր տոնավաճառ: Դա ինձ համար իսկական տոն էր: Ի՜նչ աշխուժություն էր տիրում, ի՜նչ խաժամուժ էր… Ես, իհարկե, իրադարձությունների կենտրոնում էի: Որպես այդ կողմերին քաջատեղյակ մարդ՝ տանտիրոջ իրավունքով առավոտից վերից վար էի անում ու եթե պատահաբար լսում էի, որ ինչ–որ մեկը չէր գտնում իրեն հետաքրքրող ապրանքը կամ տաղավարը, ես անմիջապես տեղեկացնում էի, թե ո՛ր կողմ գնա: Մի խոսքով՝ վոլոնտյորություն էի անում: Ա՜յ թե կիմանայի այն ժամանակ, թե այդպիսի բառ կա, անպայման հանդիպածին հպարտորեն կնշեի, թե ես ով եմ: Օգնելն՝ օգնել, բայց ես մեկ այլ պատճառով էի անհամբեր սպասում տոնավաճառների բացվելուն: Ուրեմն, մարդիկ կոշիկներ գնելիս հաճախ տուփերը չէին վերցնում, ու վաճառողների կողքին կուտակվում էին մի բլրաչափ դատարկ տուփեր: Ինձ այդ տուփերը շատ էին պետք: Ես գունավոր թելն ամրացնում էի դատարկ տուփին, ու երևակայական մեքենաս պատրաստ էր սլանալու: Հիմա, մտածում եմ, ախր ութ–ինը տարեկան աղջիկ էի, ո՜նց չէի ամաչում հետևիցս քարշ տալ կոշիկի տուփը… Ինչքան դատարկ տուփ կար, վերցնում էի ու տանում տուն, դնում էի մահճակալիս տակ, որ նախորդի մաշվելու դեպքում նորը հանեմ մեջտեղ. դա անում էի այն ժամանակ, երբ համոզվում էի, որ բոլոր երեխաները բակում են ու տեսնելու են վերջին թողարկման մեքենաս: Էդ խեղճերը թե մի տուփ էլ ունեին, իմ տվածն էր: Վաճառողներն ինձ լավ ճանաչում էին, թույլ էին տալիս վերցնել, երևի իրենց համար էլ լավ էր. ազատվում էր տարածքը:

Մի անգամ՝ առևտրի թեժ պահին, տեսա մի փայլուն, գեղեցիկ տուփ դրված է այնտեղ, որտեղ հիմնականում դրվում էին դատարկ տուփերը: Շա՜տ գրավիչ էր տեսքը, ճմռթված տեղ չուներ: Ես սիրով կսպասեի, որ մի քիչ առևտուրը թեթևանար, նոր մոտենայի վաճառողին, բայց վախեցա՝ ուրիշներն ինձնից առաջ ընկնեն: Պատկերացնում էի, թե ոնց եմ քշելու մեքենաս… Ո՜նց են երեխաները նայելու ձեռքբերմանս ու նախանձելու… Վերջը, մոտեցա վաճառողին, որը միանգամից մի քանի հոգու էր սպասարկում, շատ զբաղված էր, ու ասացի.

– Տոտա՛, կարելի՞ ա էն դատարկ տուփը վերցնել:

«Տոտան» երևի թե չլսեց: Մեկ–երկու անգամ ասելուց հետո նայեց իմ կողմն ու բարկացած ասաց՝ վերցրո՛ւ: Ես ուրախ–ուրախ մոտեցա հետևի կողմից ու բաղձալի տուփը գրկած հեռացա: Մի քիչ գնացի ու զգացի, որ ծանր է մի տեսակ: Դրեցի գետնին, բացեցի ու ի՜նչ

տեսնեմ. տղամարդու նո՛ր կոշիկներ են մեջը: Առաջին բանը, որ մտքովս անցավ՝ կոշիկները հենց այդտեղ թողնելն ու տուփս գրկած գնալն էր: Հետո մտածեցի՝ պետք չի եղել իրենց, դրա համար էին կողքի դրել: Մի քիչ երկար մտմտալուց հետո հասկացա, որ սխալմունք եղած կլինի, որոշեցի հետ տանել ու տալ վաճառողին: Պատկերացրի, թե ոնց կուրախանա, որ գտնվել է կորած ապրանքը, ու գովեստի ի՛նչ խոսքեր կշռայլի ինձ, օրինակ կբերի ինձ այդ պահին բոլորի մոտ, կասի, թե ես ոնց փրկեցի կոշիկներն անհայտ կորչելուց… Ամեն դեպքում, մազերս կարգի բերեցի, որն է՝ դնել ականջներիս հետևը, թափ տվեցի մշտապես փոշոտ շորս, որ տեսքս ներկայանալի լինի, ամեն դեպքում իմ աստեղային ժամն էր լինելու, ու մոտեցա վաճառողին: Նայեցի շուրջս, տեսա, որ հանդիսատեսի խնդիր չունեմ ու, որքան հնարավոր է բարձր ձայնով, որ լսելի լինի բոլորին, ասացի.

– Տոտա՛…

«Տոտան», ոնց հասկացա, իսկապես իմ ներվերը չուներ… Դե ոչինչ, ինքը դեռ չգիտի, թե ես իրեն ինչի համար եմ դիմում:

– Տոտա՛,– ավելի հնչեղ ու նոր տոնայնությամբ գրեթե գոռացի ես: Բոլորը մի պահ լռեցին ու նայեցին իմ կողմը. հիմա եմ հասկանում, որ երևի մտածեցին, թե ինձ հետ դեպք է պատահել ու… «առևտուրը հեչ, էդ երեխային մի բան եղած չլինի՞»… Վաճառողն էլ դժկամ դեմքով շրջվեց դեպի ինձ, երևի դժվարությամբ տեղը բերեց.

– Ի՞նչ ա եղել, ա՛յ աղջի…

– Տոտա՛ ջան, էն տուփը որ տարա, մեջը կոշիկ կար, հետ եմ բերել, վերցրո՛ւ (կամ էլ՝ վերցրե՛ք, չեմ հիշում…):

Մի շատ կարճ պահ, երևի թե վայրկյաններ լռություն տիրեց: Ես ամեն դեպքում ձգվեցի, որ ավելի տեսանելի լինեմ: Ի զարմանս ինձ՝ իմ հերոսական քայլն այլ կերպ ընկալվեց «տոտայի» կողմից: Սկզբում նայեց չհասկացող հայացքով, հետո դժվարությամբ ընկալելով ասածս՝ մի վայրի՛ բառաչ հիշեցնող գոռոցով, «փայլուն» բառապաշարով արտահայտեց իր կարծիքն իմ և մնացած բոլո՛ր երեխաների մասին, որոնք ոտքի տակ են ընկնում՝ խանգարելով իրեն աշխատել: Մտածեցի՝ երևի չհասկացավ՝ ինչ եմ ասում… Կրկնեցի, ու նորից՝ նույն արձագանքը: Չգիտեմ՝ բացի ինձնից այլ երեխաներ էլ շեշտվեցին նրա ասելիքում, դա՞ էր պատճառը, թե՞ իրոք զգացին, որ անարդար էր «տոտայի» այդ փայլուն մենախոսությունը, հաճախորդներն էդ կնոջը մոտավորապես բացատրեցին, թե ինքն ով է, ու որտեղ է իրականում նրա տեղը, սկսեցին ինձ գովեստի խոսքեր ասել… Այդ խոսքերն ինձ պետք էին՝ այս անգամ ոչ թե ինքնասիրությունս շոյելու, այլ իմ գիտակցությանը անմեղ լինելուս փաստը հասցնելու համար, այլապես ինչ–որ բան սխալ կլիներ, ու կկոտրվեր բյուրեղյա մաքուր մանկությունիցս անվերականգնելի մի կտոր…

Ծանր հրետանին

Փոխադրվեցի երրորդ դասարան: Մայրս Երևանում աշխատում էր խիստ գրաֆիկով, և ինձ, այսպես ասած, տիրություն անող չկար: Որոշվեց, որ պետք է Հոկտեմբերյանում դպրոց գնամ այդ մեկ տարին: Ես դրա համար շատ ուրախ էի, որովհետև դասերը մի քանի ժամ էին տևելու, ու մնացած ժամանակս էլի կտնօրինեի իմ ուզած ձևով:

Սկզբում դասարանն ինձ գրկաբաց չընդունեց, ինչպես կցանկանայի: Դրա բացատրությունը տարիներ հետո գտա: Դասարանի լավագույն սովորողը մի աղջիկ էր՝ Լարիսա անունով, որը բավականին ազդեցություն ուներ երեխաների վրա: Դասղեկը, որի անունը Ժասմեն էր, մորաքրոջս մտերիմ ընկերուհին էր: Ինձ ներկայացնելիս նա ձեռքը մտերմիկ գցել էր ուսիս: Հա, չմոռանամ ասել, որ մորաքույրս տանն ինձ համար մի ժամ դասախոսություն կարդաց, որ հանկարծ Ժասմենին դպրոցում անունով չդիմեմ, բայց ես չէի կարող այդ հազվադեպ հնարավորությունը բաց թողնել ձեռքիցս ու չհանրայնացնեմ մեր մտերիմ լինելու փաստը: Մեկ–երկու անգամ անունով դիմելուց հետո ես, որպես պատիժ, գրկվեցի պաղպաղակի գումարից, բայց դե հասել էի նպատակիս.ինձ ընդունեցին որպես դասղեկի բարեկամ: Ընթացքում մի քանի հանձնարարություններ ինձ տվեց Ժասմենը, ազգանունը չեմ հիշում, որն էլ Լարիսային ու նրա շքախմբին դուր չեկավ: Դա բավական

չէր, հայոց լեզվի ուսուցչուհին էլ, որպես նորեկի, ինձ կարդալ տվեց նոր դասը: Ես փայլուն կարդացի: Ասեմ, որ մեծ սեր ունեի կարդալու հանդեպ: Գիշերները լամպի լույսի տակ անհագ կարդում էի: Երևի «Փոքրիկ կոունկն» իր գործն արել էր, ես սիրեցի ընթերցանությունը: Կամաց–կամաց ոչ միայն դասարանն ինձ ընդունեց, այլև Լարիսան դարձավ մտերիմ ընկերուհիս:

Մի անգամ դասերից հետո ես ու Լարիսան տուն էինք գնում: Ճանապարհն անցնում էր դեղատան մոտով: Դռան դիմաց արկղով մանկական կերի շշեր էին դրված: Լարիսան նոր էր քույրիկ ունեցել: Նայեց այդ շշերին ու ասաց, որ իրենց հենց դրանցից են պետք: Որոշեցինք, որ երևի դեղատանը պետք չեն շշերը ու դրել են դրսում, որ տանեն թափեն: Հիմա հստակ չեմ կարող հիշել, թե ում մոտ հղացավ այդ «հանցագործ» գաղափարը, բայց մենք մոտեցանք ու մի քանի շիշ վերցրինք արկղից: Շրջվեցինք, որ հեռանանք, դեղատնից աշխատողը դուրս պրծավ ու վազեց հետևներիցս: Պարզից էլ պարզ է, որ եթե ուզում են քեզ բռնել, պետք է փախչես: Իհարկե, ինձ բռնելն այնքան էլ հեշտ գործ չէր, բայց ձեռքը մեկնեց ու պայուսակս խլեց: Ես կանգնեցի ու սկսեցի արդարանալ, որ մենք չենք իմացել, թե պետք են այդ շշերը, ու պատրաստ ենք վերադարձնելու, չնայած Լարիսան արդեն ծլկել էր՝ իր հետ տանելով նաև ավարը: Աշխատողն ասաց, որ միայն մայրիկիս կտա պայուսակս: Պահո՛, դա արդեն հղի էր լուրջ հետևանքներով: Վերևում նշեցի, որ մայրս Երևանում էր, այսինքն՝ պետք է գործին խառնվեր ծանր հրետանին՝ բաբոս: Աշխատողին սկսեցի խնդրել, համոզել, բացատրել, որ մամաս Երևանում է, խոստանալ, որ երբեք այդ կողմերում չեմ երևա, միայն թե չանի այդ բանը: Իզուր էր: Իհարկե, պատմությունը շատ տհաճ էր, ու դեռ ավելի մեծ տհաճություններ էին սպասվում, բայց ես չէի իմ դարդը, դեղատան աշխատողն էր մեղքս գալիս: Ախր ե՛ս էի խցկվել նրա տարածքը, բայց պատժվելու էր նա: Ինչու ինքը, որովհետև բաբոյիս համար ես անձեռնմխելի մեծություն էի, ու դա, նրա կարծիքով, պետք է ընդունեին բոլորը: Հետո էլ՝ հո չէի՞ ասելու բաբոյիս, որ մեղավոր եմ, դա կլիներ իմ կողմից խոստումնազանցություն, որովհետև ամեն առավոտ գործի գնալիս ինձ տրված չափաբաժնի ամենակարևոր հորդորանքը խելոք մնալն էր: Իսկ ես վերցրի ու ի՞նչ արեցի: Մի խոսքով՝ դեղատան աշխատողը մնաց անդրդվելի: Ես հանգիստ խղճով, որ արեցի ամեն ինչ այդ կնոջ համար, քայլերս ուղղեցի հիվանդանոց՝ բաբոյիս մոտ: Բաբոս, սպիտակ խալաթը հագած, վրայից սպիտակ գոգնոցը կապած, շերեփով համտեսում էր հիվանդների համար նախատեսված ճաշը: Շա՜տ դժվարությամբ գտա հարմար բառեր՝ պատմելու համար: Բաբոս սկզբից մտածեց ուղղակի շատախոսում եմ, բայց երբ հասա այն պահին, որ պայուսակս վերցրել և չի տվել աշխատողը, լրջացավ, շերեփը դրեց ու ասաց, որ սկզբից պատմեմ եղելությունը: Այնքան համարձակություն չունեցա, որ պատմեմ՝ ինչպես է եղել իրականում: Պատմեցի այնպես, ինչպես կուզեի, որ եղած լիներ.

– Ես ու Լարիսան մեզ համար միամիտ դեղատան կողքով գնում էինք, մեկ էլ աշխատողը դուրս եկավ, իմ պայուսակը ձեռքիցս խլեց ու ասաց, որ մինչև բաբոդ չգա, չես ստանալու:

Բաբոն թերահավատորեն նայեց իմ ուղղությամբ: Իմ կարծիքով նրան զարմանալի չթվաց, որ կարող են պայուսակս վերցրած լինել, որովհետև իմ արկածախնդրությունն իմանալով՝ վստահ էր, որ մի բան արած կլինեմ: Բաբոյին դուր չեկավ այն, որ իմանալով իր թոռն եմ, իսկ իրեն բոլորն էին ճանաչում, չեն գնացել զիջումների՝ պայուսակս չեն տվել:

– Հենց այդպես էլ ասա՞ց, որ մինչև բաբոդ չգա, չես ստանա:

– Հա՛, բաբո՛ ջան:

Բաբոս գոգնոցը հավաքեց տեղավորեց գոտու մեջ, բռնեց ձեռքս, ու արագ–արագ գնացինք դեպի դեղատուն: Ճանապարհը բավականին երկար էր, բայց մինչև տեղ հասնելը ծպտունս դուրս չեկավ, որը վկայում էր իմ մեղավորության մասին: Բաբոս ներս մտավ ու միանգամից.

– Աղջի Վարսի՞կ:

– Հա՛, Մաքրուհի՛ ջան, էս ի՞նչ խաբար է՝ եկել ես,– ժպտալով ընդառաջ եկավ մեզ ու հանկարծ աչքն ընկավ ինձ վրա:

– Էս ո՞ւմ երեխեն ա, Մաքրուհի՛ ջան:

– Ո՞նց թե ումն ա: Ուրեմն համ ասում ես՝ բաբոյիդ կանչի՛, համ էլ քեզ միամիտի տե՞ղ ես դնում:

Սկսվեց մի երկխոսություն իմ անմեղ–մեղավորության, պայուսակի ու ձուն հետագայում ձի դառնալու մասին: Բաբոս, իհարկե, ինձ էր պաշտպանում, ու նրա միակ համոզմունքն այն էր, որ ինձ չէր կարող շիշ պետք եղած լիներ, որն իրականում ճիշտ էր:

– Իմ երեխին եթե շիշ պետք լիներ, ես Տորիկից (Տորիկը հիվանդանոցի մանկական կերերի բացթողնման բաժնի վարիչն էր) մի արկղ կվերցնեի ու կտայի թոռանս, թող ինչքան ուզում էր խաղար: Չհամարձակվես երեխուս զրպարտես:

Ինչքան էլ աշխատողն արդարացավ, բաբոս մնաց անդրդվելի իմ անմեղության հարցում: Պայուսակս վերցրեց, ձեռքս բռնեց, ու հաղթական դուրս եկանք դեղատնից: Լուռ քայլեցինք մինչև շենքի անկյունը, թեքվեցինք այնպես, որ դեղատունն այլևս չէր երևում, բաբոս կանգնեց, ահավոր ցավոտ սեղմեց ձեռքս ու ասաց.

Конец ознакомительного фрагмента.

Текст предоставлен ООО «ЛитРес».

Прочитайте эту книгу целиком, купив полную легальную версию на ЛитРес.

Безопасно оплатить книгу можно банковской картой Visa, MasterCard, Maestro, со счета мобильного телефона, с платежного терминала, в салоне МТС или Связной, через PayPal, WebMoney, Яндекс.Деньги, QIWI Кошелек, бонусными картами или другим удобным Вам способом.